



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Ապրիլ 24ը կանխող ու յաջորդող օրերուն, Յեղասպանութեան յիշատակման բազմաթիւ ձեռնարկներ, արարողութիւններ, քաղաքական հաւաքներ ու հանդիսութիւններ նախատեսուած են մեր շրջանին մէջ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան անձամբ ընդառաջած է ներկայ ըլլալու հետեւեալ ձեռնարկներուն.-

- **Ուրբաթ, 18 Ապրիլի** առաւօտուն, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթիի հրաւերով, առաւօտեան ժամը 10ին, քաղաքապետարանին մէջ Յեղասպանութեան յիշատակումի յատուկ արարողութիւն:
- **Երկուշաբթի, 21 Ապրիլի** կէսօրին, Առաջնորդ Սրբազանը պիտի հասնի Սաքրամենթօ, ուր աղօթքով բացումը պիտի կատարէ Զալիֆօրնիոյ խորհրդարանի նիստին, նուիրուած՝ Յեղասպանութեան զոհերու յիշատակին: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ նաեւ այս առիթով կազմակերպուած ընդունելութեան:
- **Երեքշաբթի, 22 Ապրիլի** առաւօտուն, Առաջնորդ սրբազանը ներկայ պիտի ըլլայ Լոս Անճելըսի Board of Supervisorsի նիստին, որ նուիրուած է Յեղասպանութեան յիշատակումին, նախագահութեամբ Մայքըլ Անթոնովիչի:
- **Չորեքշաբթի, 23 Ապրիլի** երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուող Ս. Պատարագին, մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու հոգեւոր հովիւներու: Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցւոյ կողքին կանգնած յուշարձան խաչքարին առջեւ տեղի պիտի ունենայ հոգեհանգիստ:
- **Հինգշաբթի, 24 Ապրիլի** կէսօրին, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի պիտի ունենայ հոգեհանգիստ: Իսկ երեկոյեան, Կլենտէյլի քաղաքապետարանի սրահին մէջ տեղի պիտի ունենայ քաղաքական հաւաք:
- **Երեքշաբթի, 29 Ապրիլի** երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ ապրիլեան դասախօսական ձեռնարկ, որ կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան տարածման յանձնախումբին կողմէ: Պիտի դասախօսէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազիկեան: